ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊՐՈՖ. Ռ. Հ. ՅՈԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՅՈՒՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA
"HEMATOLOGY CENTER AFTER PROF. R. H. YEOLYAN" CJSCo

МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
"ГЕМАТОЛОГИЧЕСКИЙ ЦЕНТР ИМЕНИ ПРОФ. Р. О. ЕОЛЯНА" АОЗТ

375014 ՀՀ, Երևան, Հ. Ներսիսյան 7
7 Nersisyan str., Yerevan, Armenia
РА, Ереван, ул. Нерсисяна 7
☎ (374 10) 28 38 00, 28 38 93

26.07.2022 N 02-295

«ԼԱՎԵՆԴԵՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
Ա. ՇԱՀԶԱԴՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Լավենդեր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մատակարար) միջև 07.03.2022թ.-ին կնքվել է թիվ ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/20-02 պայմանագիրը (այսուհետ պայմանագիր), որի թիվ 9 չափաբաժնի շրջանակներում Մատակարարը պետք է մատակարարի հեղուկ օճառ:

Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանվել է՝ հեղուկ օճառ, բարձր տեսակի մաքուր ճարպից, չոր և յուղոտ մաշկի համար, հակամանրէ, 3լ-ոց թափանցիկ պլաստիկատե տարաներով, բուրավետ, PH նեյտրալ միջավայրով, չի գրգռում մաշկը, պարունակում է խմելու ջուր, լաուրիլսուլֆատ նատրիում, նատրիումի քլորիդ, գլիցերին, բետաին, կիտրոնաթթու, պարֆյումերային կազմ, սննդային ներկ, նատրիումի բենզոնատ:

Մատակարարի կողմի մատակարարված հեղուկ օճառը չի համապատասխանել պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրի պահանջներին, ինչի արդյունքում բանավոր պայմանավորվածության հիման վրա երեք անգամ փոխարինվել է, սակայն մատակարարված և ոչ մի խմբաքանակը չի համապատասխանել ապրանքի

տեխնիկական բնութագրի պահանջներին: Փոխարինված վերջին խմբաքանակից 10.06.22թ.-ին վերցվել են նմուշներ, որոնց հետազոտության արդյունքում հեղուկ օճառում հայտնաբերվել են մանրէների անթույլատրելի տեսակների առկայություն, ինչպես նաև թույլատրելի մանրէների անթույլատրելի քանակներ: Մասնավորապես՝ Escherichia coli 10^8 քանակով, Enterobacter spp. 10^7 քանակով և Staphylococcus spp. 10^6 քանակով:

21.06.22թ.-ին Մատակարարը ևս մեկ անգամ գրավոր ծանուցվել է ապրանքի անհամապատասխան լինելու մասին, սահմանված ժամկետում կատարել է ապրանքի փոխարինումը, սակայն մատակարարված նոր խմբաքանակում ևս հայտնաբերվել են անթույլատրելի մանրէներ:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է պայմանագիրը. Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մատակարարի կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ուստի Պատվիարատուն մասնակի միակողմանի հրաժարվում է 2022 թվականի մարտի 7-ին կնքված թիվ ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-22/20-02 պայմանագրից՝ համապատասխանաբար այն համարելով լուծված:

ՏՆՕՐԵՆ ՍԱՄՎԵԼ ԴԱՆԵԼԱՅՆ